



Ձեր Պարտավորությունը Բժշկական Օգնութիւն Մատակարարելու համար



Department of Child Support Services (DCSS) (Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների Բաժնի) առաքելությունն է բարեփոխելու երեխաների բարեկեցությունը և ընտանիքների ինքնաբավությունը, մատակարարելով մասնագիտական ծառայություններ, գտնելով ծնողներին, հաստատելով հայրությունը և գործադրելով ֆինանսական և բժշկական օգնութեան դատական որոշումները: Ծնողները և գործատերերը կարելի է գործընկերներն են ապահովելու թե բաւարար բժշկական օգնութիւն է մատակարարվում ձեր երեխաներին:

■ Ի՞նչու է DCSS-ը պահանջում տրամադրելու բժշկական օգնութիւն

Դաշնակցային և նահանգային օրենքները պահանջում են որ թե հայրը և թե մայրը բժշկական ապահովագրութիւն տրամադրեն իրենց երեխաներին: DCSS-ը հանձնառութիւն ունի հիմնելու և գործադրելու երեխայի ապրուստադրամի և բժշկական օգնութեան դատական հրամանագրերը՝ ըստ երեխայի ծնողների եկամուտի և այլ ժամանակամիջոցի որ իւրաքանչիւր ծնող անց է կացնում երեխայի հետ:

■ Դրա ծախսը ի՞նչքան է իմ համար

Ըստ Կալիֆորնիայի օրենքի, առողջապահական ապահովագրութիւնը համարվում է տրամաբանական ծախս այն պայմանով որ երեխային կամ երեխաներին ապահովագրի մեջ ներառելուց հետո գումարը ավելի բարձր չլինի քան ոչ-խնամող ծնողի եկամուտի 5 տոկոսը: Դիմեցէք ձեր գործատիրոջ որոշելու երեխային ձեր ապահովագրութեան ավելացնելու ծախսը: Եթե ապահովագրութիւնը մատչելի չէ ձեր գործատիրոջ միջոցով, կարող էք առողջապահական ապահովագրութիւն փնտռել ոչ-գործատիրոջ կողմից հովանավորված ծրագրերում բաւարարելու մեր դատական որոշումների պայմանները:

■ Ի՞նչ կը պատահի գործս ձեռքից տալու պարագային

Տեղեկացրէք երեխաների Օգնութեան ձեր Տեղական Գործակալութեան եթե ձեր գործը ձեռքից տվել էք: Կարող է որ դուք պայմանուևակ լինէք բարեփոխելու ձեր երեխայի ապրուստադրամի որոշումը հիմնված ձեր վիճակի փոփոխութեան վրա: Եթե ձեր գործը ձեռքից տվել էք, այլ ծրագրեր կան որ կարող են ձեզ և ձեր երեխաներին առողջապահական ապահովագրութիւն տրամադրել:

Կապվեցէք երեխաների Օգնութեան ձեր Տեղական Գործակալութեան հետ՝
1-866-901-3212, կամ TTY: 1-866-399-4096

Հինգ լաւ պատճառներ թե ինչու երեխաների համար կարելի է Բժշկական Ապահովագրութիւն ունենալ¹

Ապահովագրութիւն ունեցող երեխաները ավելի հաւանական է որ կանխարգելիչ խնամքների մատչելիութիւն ունենան:

Ապահովագրութիւն ունեցող երեխաները ավելի պատրաստված են հաջողելու իրենց դպրոցական կեանքում:²

Ապահովագրութիւն ունեցող երեխաները ավելի առողջ են և ավելի երկար են ապրում:³

Ապահովագրութիւն ունեցող երեխաները ավելի հաւանական է որ կայուն և հետեւողական բժշկական խնամքի աղբյուր և միջոց ունենան:

Առողջապահական ապահովագրութիւնը օգնում է երեխայի սոցիալական և զգացական զարգացման:

¹ "Why Do School Aged Children Need Health Insurance?" Campaign for Children's Health Care (2007)
² Why Health Insurance Matters for Children, Washington: Campaign for Children's Health Care (Յու.Լիւ, 2006), էջ 1:
³ Bobvbjerg, Randall and Hadley, Jack "Why Health Insurance is Important" The Urban Institute (Մայիս 2007)



Child Support Directors Association
A Coalition of Experts Collecting Billions for California's Children



“Երեխայի Ապրուստադրամ... Ներդրում մեր երեխաների ապագայի համար”

CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION (ԵՐԵՆԱՅԻ ԱՊՐՈՒՍԱԴՐՈՒՄԻ ԱՊԱՐՈՎԱՆ ԴԻՐԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ)